[1] Եւ է առաջնոյ յեզանակին հանգամանք այսպիսի. յորժամ ասէ «Ինձ բնաւ[ւ] ես ոչ իրիք դու պատճառ, արե՛, այլ տօտուածքն»: Արդ առաջի վանդիդ տեղի ի բնաւ իսկ տաղս, թէ բնութեամբ և թէ գրութեամբ միշտ զերկայն¹⁵ ի եթ ինդրել: Իսկ երկրորդ վանդգ¹⁶, զի ի ձայնաւոր երկայն յանգեցու և երկրարրառն և զմին¹⁷ յարուցեալ¹⁸ են, խորտակելով զդա և արգելլով սաստկարար աւրինակ իմն զալիս ծովու վէմ պատահեալ, իշխանութիւն ետ առնել և սուղ, որ է ստեղն:

[2] Իսկ երկրորդ՝ «Պատրոկլէ, ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձինք: Վասնզի սովորութիւն է նային¹⁹ զաւրէն մոմոյ²⁰ երբեմն կակզանալ և երբեմն խստանալ: Արդ առաջին վանդիդ կակզանալով թէլ թոյլ եղ գերազանցել անձայնիդ, զի արացէ երկայն: Իսկ երկրորդ վանդիդ խստանալով դաստ զաւրէն²¹ մոմոյ ցուրտ արգել զվատածայնն առնելով սուղ, որ է ստեղն: Եւ յորժամ սղացուցանել ըստ այսմ աւրինակի զվանդգ ձայնաւորի պէտք են և կամ սղի ըստ ոյի²² սղացելոյ ըստ երկամանակին, զդուշանալով յայլոց ձայնաւորացն և զնայի և զվատածայնի զնոյն պահել խորութիւն:

[3] Իսկ երբրորդ՝²³ զենուառ ոչ խարեաց խոշիւնն թէպէտ յումտ էր: Յորժամ երկրորդ վանդին ձայնաւոր սուղ դիսկիցի²⁴ միով բազածայնիւ և բանն երկուք վանդիւք միայն զիատարումն առնուցու²⁵ և յաջորդ վանդն ի ձայնաւորէ հաւիցի, իշխանութիւն է քեզ առնել համբոյր, թէպէտ և սուղ է ըստ այլում կարծեաց. և հաստատի այս, զի ամենայնի խնդիր թէպէտ և փոքր իցէ, կատարելութիւնն²⁶ է այսոցիկ շաղաշարաց:

Յայտնեն և պատմութիւնքն առաջնոյն Պրիամոս Տրովացի²⁷ և Պարիս,²⁸ որոյ զկինն յափշտակեալ էր ի հելլենացոց որդին նորա՝ Պրիամոս⁹ քննելով զի վերայ եկելոցն զործ՝ տուկով ցաղջիկն. «Ե՛կ այսր³⁰, զի չես դու այսմ պատճառք:»

Իսկ երկրորդին³¹ Արիլլէս³² Հելլենացի և Պատրոկլէ դայեկորդի

Տարբերեցվածներ — 1 Ա ձայրն. 2 Ը շիք. 3 Ը հանկամանս ի վերա բերել. 4 Ը նախ զինդ. 5 Ա աղցիցն, Ը նուաղիցն. 6 Ը եղ. 7 Ը չիւնդ. 9 Ը և կամ փոխեցելոյ. 10 ԱԲ յետոյ. 11 ԱԲ դիւրութիւն. 12 Ը խորհրդոյն. 13 Ա երկարիցն. 14 ԱԲ աւժընդակութիւն. 15 Ա զերկայնութիւն. 16 Ա վանդի, Ը վասնզդ. 17 Ա դիմին. 18 Ը յարացուցեալ. 19 Ա չիք. 20 Ը ժարմանոյ. 21 ԵԸ հանդոյն. 22 Ը աղիստու և. 23 ԱԲ երկրորդ. 24 Ը դիմեցի. 25 ԱԲ առնու. 26 Ը թէպէտ... կատարելութիւնն է թէ և փոքր ինչ կատարելու է. 27 Ա Պրամոս Տրուացի, Ը Պրիամոսորիացի. 28 ԱԲ Պարիկրիս. 29 Ը որոյ... Պրիամոս չիք. 30 Ը եկ այսր՝ եկն կայ արդ. 31 Ա երկրորդումն, Ե ի յերկրորդին. 32 Ը Աքոզու չիք.

նորա. և իրքի ետես Աքիլլէս զՊատրոկղէ մեռեալ հանդերձ քաջութեամբ՝ լալով հարճն Աքիլլեայ տաէ, թէ՝ «զթեղ¹ յամուսնութիւն տամ Աքիլլեայ», տաէ՝ «Ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձնա²:

Իսկ երբորդին³ Նեստոր ոմն հմուտ պատերազմի, զոր տուեալ ցՄարտուն⁴ ոմն բժիշկ վիրաւորեալ, զի գարմանեոցէ. որով գարմանելով զվերսն տայց նմա հաց և սեաւ գինի: Բայց իրը յոյժ ամբոխէր յոյզ պատերազմին, ոչ սիրելի լինէր նմա ըմպումն գինւոյ, քան թէ երթալ ի զործ պատերազմին⁵:

[ԺԱ. ՅԱՂԱԳՍ ԲԱՌԻ]

Յայտնելով սորտ և զհառարակ շաղաշարաց զհանգամանս՝ հիմն արկանէ արդ բանի զբառս, որպէս նաւի զողնափայտն: Եւ լոի բառ տառցուած, որ է բառ միում վանդի և կամ բառ երկուց և կամ բառ երից. նշանակն մի է: Իսկ մասնդ է սեռ և զուղնաքեայ առ բան տափ, որ է մեծագոյն քանի դրա. և դարձեալ՝ զի դոյզն տափ. որ թէն իցէ իսկ՝ զուղնարեայ, որ թէ ինքն փոքր է, մեծի ունի զաւրութիւն: Բառ որմէ⁶ և բաղդասութիւն է⁷ բազեալ իմն կարգաւորութեամբ և անգամ լեռլ բառդ բանի: Առ որով իմանալի է և զայն, զի ամենայն արուեստաւոր կամի իրս տաջի արկանել, ոչ առանց նիւթոյն գիւտի մտարերէ, որպէս և այս արուեստաւորս¹⁰ յասաջ եղիտ զնիւթն, որով ընդ աշտիճանսն էլ մինչե ի բանսն:

[ԺԲ. ՅԱՂԱԳՍ ԲԱՌԻ]

Եւ ալր կամի ցուցանել որքանիք ի սմա են բարձանմունք մասսանց և այլ ևս պաշտեցեալ լինին կիրք:

Եւ հետեւելզ¹¹ տաելով զրա որպէս¹² զհետանկեալ բառիցն համեմատ¹³ իմն շարադրաց, զորս ի մանրամասն զործոյն իւրեանց ասացին հետեւեկս, իսկ զքերդողս՝ հեծեւալս, քաղելով ի յինքն և անգամս զործելով, որով և ինքնակատար երկի և զհանգամանս մտացն և զփոփոխմունս գլխոցն ըստ տրամախոհութեան բաւականարար յայտնիցէ, ոչ ընդ տարակուսութեամբ զաւրէն վանդին և կամ նոյն ինքն բառիս ինքնըստինքեան յանդեալ:

Բայց զմասունս բանիս ոմանք և զառասութիւնն յաւելլով տացին ինն: Իսկ իմաստառէրք և զանուան մասունս ընդ անուան զասելով¹⁴ և բային ընդ բայի, ածելով առ նոսա զշաղկապն և զաւդն¹⁵ և զնախագիրն, տացին հինդ, այլ սա զառասութիւն իրքի զտեսակ զտելով ընդ անուամբ, տաց ութ, իսկ Արիստոտելէս զառարասութիւն և զբացասութիւն և զբացերեսութիւն ընդ անուան և ընդ բայի՝ տսելով հինդ գոլ:

Բայց մասն տսելով տստանաւը և ոչ տեսակ երեսեցոյց զմասն, զի յամենայնի ի վեր է տեսակ քան զմասն, որպէս ի վեցոն ի սկսրան արուեստիս քերդողն¹⁶. զի զնոսա թեե ոչ զվեցն ունին, ոչ է կատարեալ քերդող, իսկ ճարտաստնն միով միով: Այլի յայսմ վայրի, զի զաւրէն ունի

Տարբերեծվածներ — ¹ ԱՅ քեզ. ² Յ անձինս. ³ ԱՅ ի յերբորդումն. ⁴ Ա Մաքաւ, Յ Մաքասն, Յ Մաքսոն. ⁵ Յ զվերն. ⁶ Ա ոչ... պատերազմին⁷ չիք. ⁷ Ա որ թէն իցէ, Յ և թէն իցէ իսկ. ⁸ Յ բառ որում. ⁹ Ա բաղդասութիւն է, Յ բաղզասութիւնէ. ¹⁰ Ա կամի... արուեստաւորս¹¹ չիք. ¹¹ Ա չիք. ¹² Յ իբր. ¹³ Յ համեկ[մատ]-ից հետո տեքստն ընդհատվում է. ¹⁴ Ա դասել. ¹⁵ Յ չիք. ¹⁶ Յ չիք:

դայլ ևս մտառնս կարէ գոյացուցանել, որպիսի ինչ անուն զնոյն հետեւալոն և զնոյն զուգաղատիւս ոչ երէց և ոչ կրտսեր, այլ տեսակն թե ունիցի մտառնս, որպէս առենականն զամբաստանելն և զօդատասխանելն երէց և կրտսեր¹, զի նախ ամբաստանելն լինի և ուզա պատասխանի առնել², նոյնպէս և այլքն, յորոց զիտելի է և զայս, զի [է] տեսակը, որ³ զաւըէն սեռի բարձանի ի մտառնս և ոչ ինքն մնայ որպէս մարդ⁴, և է, որ բարձանի և ինքն մնայ, որպէս ծառ ի պտուղ և յոստու⁵ և ի կեղեւ:

[ՃՊ. ՅԱՂԱԳՍ ԱՆՈՒԱՆ]

Զինի որոյ իմանալի է և զեղեալն վէճ անուան և բայի, քանզի ոմանք կամեցան նախաղասել զրայ, իրը թէ [ի] շինելոյ շինելն և ի նաւելոյ նուելն. իսկ այլք ոչ նմանալիս, այլ զանուն ասացին նշանակիչ գոյացութեան, այլ զրայ՝ պատահման: Եւ զի այսպէս է. նոխ յառաջանալ ի դէս է զոլոյն⁶ գեր քան⁷ զպատահեալն, յայտ է թէ անուն քան զրայի:

Իսկ մասնդ է սեռ. նոլովականաւ՝ իրը սահմանաւ⁸ զատոյց ի բայէն: Մարմին և իր տսելով նշանակել ի գերանութենէ որոշեաց, իրը զի մարշինն, որ շաւշափի և ըմբռնի, և իր, որ մտաց ճնշի և միայն լոկելաց լոի անըմբռնելի: Բայց և զիրս աստանաւը պարտ էր տսել անմարմին, քան զիր⁹:

Հասարակն մարդ, յատուկն՝ ոմն անուամբ իսկիւ:

Իսկ սերք ոչ ի գոյացութեան վերակոչին, զի ոչ էր քնութիւն քննել, այլ դժայնի¹⁰ նշանակս յայտնել, ոյք են ի Հոսոմին լիով արտկանին և իդականին և չեղոքին, իւ և կամեցի ոք յայտնել ըստ երեցունց կարողութիւն է, որոց ոչինչ ի մերումս երկի. միայն սոսկ և սակաւ ինչ, իրը թէ հայր և պատահեակ արուին կոչումն և մայր և աղջիկ՝ իդականին այլ ևս նոյնալիսիք: Բայց յաւելուն ոմանց զհասարակն և մակաւասար ոչ դինքն, այլ զայլս զատուցանէ արուեստաւորս այսմ պատճառ, և է հասարակի այսպիսի, քանզի ձի և շուն հասարակու կոչին երկոքումք ձայնիւք, իսկ մակաւասարն ոչ ես, այլ ի վեր քան զհաւասարն իդականին անուն և եթ է ծիծեառն և արիս, նոյնպէս և արականին արծուի և առիւծ, քանզի այնմ միայն հանդիպին:

Եւ նախաղաղափար¹² իմանալի է նախաւընակ իմն¹³, յորմէ ածանցին, իրը յերկը՝ բոյսք և կենդանիք և¹⁴ ըստ նմին, և քան՝ ի մարդոյ¹⁵ և բերք՝ ի սերմանց պաղոց¹⁶ տնկոց:

Բայց տեսակը տսին, զի որպէս¹⁷ ասացեալքն ածանցին իրը յազրերէ վտակ, այսպէս յանուանէն¹⁸ իրքն՝ երկիր և երկրային, երկին և երկնային, ջուր և ջրային և որք նմա այսոցիկ ճշգրտեցին¹⁹:

Իսկ ածանցացն տեսակս զի յոյժ անհուն և անրաւ են, թողլով դայլոցն յատուկ, զրանաւորէս բուռն ենար, առաջնորդութեամբ յայտնել, տսելով նախ՝

[1] զհայրանունականսն այսպիսի. հայրանուն ստոյդ տսի ըստ հարա-

Տարբերցվածներ.—¹ Ա այլ... կրտսեր՝ չեր. ² Ա տնուլ. ³ Ա չեր. ⁴ Ա չեր.

⁵ Ե յառա. ⁶ Ա զու այն. ⁷ Ա չեր. ⁸ Ե սահման. ⁹ ԱՅ զի իր. ¹⁰ Ա դժայնի. ¹¹ Ե հաւասար. ¹² Ա նախաղաղափար. ¹³ Ե ինչ. ¹⁴ Ե չեր. ¹⁵ Ա ի բարզոյ. ¹⁶ Ե պաղոց. ¹⁷ Ե որպէս զի. ¹⁸ Ե յանցանէն. ¹⁹ Ե ճշգրտեցին:

զատ զաւակին յառաջ գոյոյ նույնովէս և զանունն ի նմանէ դնել, իբր Արտաւազդ Վարդաննեան. իսկ պիտակն է նախնեացն:

Եւ գաղափարը հայրանուանցն, որպէս թէ տնուն որդոյն զառաջին վանդն ի հաւրն անուանէ ունիցի, իբրեւ ի Բարսյ՝ Բարէն¹ և ի Սամայ՝ Սամէն, բայ որում և Թորդայից գաղափար է, զի որպէս դոքա ձեղքելով² ի համանման լեզուէն խուսո, նմանովէս և Հոռոմին դորացի³ ոմն անուանեալ լիդու:

Նովին ձեռվ⁴ բայ հայրանուանցն և իդականացն երեխ գաղափար՝ կոչեցեալ ի հարանցն⁵ ի Մանայն Մանանոյշն և ի Տրդառայն՝ Տրդառուի, որոց թէպէտ ոչ իրաւ համարեցաւ Հոմերոս առնել զգաղափար, իբրեւ անարժան համարեցաւ⁶ յիւրն պայծառ և հզաւը արարուածո խոռնել զտկար և զնուաստ բնութեանցն անուանս, այլ զկնի եկեալքն արժանաւոր վարկան բայ ամենայն կարեկցութեան նոցա և յայոմ ոչ զատուցանել:

[2] Նու և սասցականի⁷ իբր թէ պարասեալ զինքեամբ ստացուածոյն զստացողին անուան, առինչունակարուր կոչեցեալ ի նմանէ գիրք և կամ այլ ինչ կենցաղաւգուած⁸ ստացուածք:

[3] Այլ բաղդատականացն են ձեք երկու. կամ զոյդ ընդ զուգի, որպէս ի միոյ ազգէ էին և քաջք երկոյքեան՝ Դաւիթ և Սաւուդ. և կամ նուազ ընդ առաւելի, որպէս գեթացիքն ընդ Դաւիթի, որոց թէ ընդդէմ թուիցի ոմանց, զի Գեթացիքն բազումք, բժշկի այնու, զի ոչ համեմատեաց զարութիւն բազմացն առ Դաւիթ, այլ որով նուազ գտան: Բայց գաղափարք բաղդատականաց են, յորժամ յերկուց ընթացողաց ասի՝ ոմն քան զոմն արագ, սակաւ ինչ նշանակէ, ապա թէ՝ արագուոյն գոլ, ամենայն ումեք¹⁰ տուաելու իմանի. ոոյնովէս և սաստկագին, ուժգին:

[4] Եւ զերադրականի ամենեին իմանի առանց բաղդատութեան ծայրք բանին¹¹ և ընդդիմակ ի նմին¹² յորժամ առիցի սքանչելիս, ընաւ իւիք զերազանցեալ զարմանալեար, նոյնովէս և հակառակ նորին:

[5] Այլ փաղաքշական է աղջկական¹³, որ ոչ սասցու ի մերումն վասն պատկառանաց, վասնզի¹⁴ այնսլիսեացն¹⁵ բնութիւնն սովորեաց ըստ անկատարութեան¹⁶ տիոցն և զխաւոսն¹⁷ անկատարո առել, այլ ի փաղաքշելն վասն աւկափ հարկաւոր է զմեծան և զպատուականսն առնուլ ի մէջ անուանց թախանձանաց, որպէս զի ի խնդրելոյն¹⁸ մի լիւաստկարին¹⁹ ի գծուձոն կոչելոյն հանդիպեացի:

[6] Յարանուն է՝ յառաքինութենէ՝ առաքինի և ի խրախնանութենէ՝ խրախնան:

[7] Իսկ բայածական²⁰ յորժամ սիրեմ ասի բայ է և սէր՝ անուն, արդ ածանցելով ի սէրոյ անտի [սիրուն հաստատի]:

Դարձեալ ի ձես²¹ անուանց պարզ՝ իբրեւ մեկնակ ինչ անուն. ի նոյն յաւելեալ միւսն՝ ճանաչի՝ բարդ, և յարաբարի²² անուն լինի՝ սուղ ինչ այլ յար յինքն ունելով. և յարաբարդ ասի, զի ի պարզէն զտու և հուար ի բարդն մասամք, այլ ոչ նոյնովէս:

Տարբերեցվածներ. — ¹ Ա Բարդէն. ² Ա ճերկելով. ³ Ա զորացի. ⁴ Ա ձայնի. ⁵ Ա ի հարսանցն. ⁶ Ա Հոմերոս... համարեցաւ շիք. ⁷ Ա ստացականը. ⁸ Ա կենցաղոյս. ⁹ Ա գաղափար. ¹⁰ Ա ուստեք. ¹¹ Ա ծայր քնարին. ¹² Ա ընդդիմակին. ¹³ Ա աղճկան. ¹⁴ Ա շիք. ¹⁵ Ա զայնսլիսեացն. ¹⁶ Ա անկարզութեան. ¹⁷ Ա խաւան. ¹⁸ Ա ի խնդրելոյն. ¹⁹ Ա այլ լիւաստկարին. ²⁰ Ա Բայաստկական. ²¹ Ա ձես. ²² Ա յարբարդ:

իմանալի է և զարժագանութիւն բարդիցն, վասնղի անհնար է անուան¹ իմիք առանց այսց լինել զարժագանութեանց², կամ եթէ³ յերկուց լիոց և յերկուց պակասից, և դարձեալ՝ նախողասելով զլին և զպակառն ի հետ ըերելով, և կամ առաջի զպակառն ունելով և զլին ի վերջէ:

Բայց թիւ աստանաւը չափ իմանի, իբր թէ առանց յաւելոյ և նուազութեան չափեալ լինի եզականդ ի մի և յոգնականդ՝ յանըաւա: Այլ է երբէ երբեք, զի և եզականիդ գիծ զյոքնականն ըերէ նշանակ, որպէս թէ պար առելով կամ առհմ, նոյնպէս⁵ և յոքնական[ի]ն՝ զեզականն, որպէս Խոյարանը⁶ և զերկուսն:

Իսկ առելն նախ հոլովս և ապա ուղղական և երեցաւ ոմանց ընդդիմութիւն ի տեղւողդ⁷, որպէս թէ ուղղական և⁸ կամ հոլովական պարտէ տնուանել. բայց բժշկեցաւ այսպէս, թէ բոլորիցս ընդ արեգականս լինելութեանցս [անուանք կոչեցան շնորհիւն աստուծոյ] և կամ զոր ի նազուրացոյց⁹: Արդ ըստ ի վերուստ դրութեանն անուանն անգումն ասի նոյն ինքն ուղղականն, աւրինակ իմն զրչի ի վերայ կակուդ իմիք նիւթոյ նկարժամք ուղեղ կացելոյ և անզուստ ապա հոլովումն առնելով ի սեռական և ի տրական և որ ի կարգին¹⁰:

Եւ զի անուանական ասի ուղղականն, իբրեւ սկիսրն իմն և պատուականգոյն. իսկ պարզ՝ մեկնակ, անշարադիր¹¹:

Եւ սեռականդ¹² ստացականդ է ըստ ինքեան հանդիպեալ ստացուածոյ և կամ հայրենոյ:

Բայց տրականի¹³ լոի թիսրական և զի ոչ լոի հաւաստի ի մերումս, որ և ի Հոռոմին յայտնի¹⁴, տրականն ձայնիւ յայսմ անուանէ այսմ անուան առաքեալ. յորոց¹⁵ ցուցականն յառաքականէն ըստ երկուց դիմաց. յորժամ առաքեսցի ոք առ ոք յումեքէ, զհեռաւորն նշանաւոր բանիւ ցուցանել և զմաւտաւորն երեխն տեսութեամբ:

Իսկ հայցականի¹⁶, որ ըստ Ելենացւոց լեզուին պատճառական, է այս քանզի յորժամ ի չար ինչ կոչեսցի ոք կամ ի բարի ընդ ձայնին զեկուցանէ զպատճառն:

Նա և կոչականդ¹⁷ յայտնի է առհասարակական, զի ովդ, որ է նշանակ կոչականի, հաւասարապէս երթեալ լինի ի վերայ դիմաց և իրաց, բարեաց և հակառակին:

Իսկ ենքանիեալ անուամբդ, որ է որպէս ընդ անուամք անկեալ և տաջիկայ մասունս, զոր ասացեալ է զտեսակէ¹⁸. ոչ որպէս տեսակս¹⁹ ի սեռէ բարժանեալ, այլ միայն ձայնիւ նշանակաւ²⁰ հարկաւոր անուամք վարի տեղւողդ:

Բայց վասն [1] իսկիդ և [2] առասականիդ հակառակութիւն եղեւ յոմանս. Պզատոն զառասականդ գասեաց առաջին, իբր թէ ի տեսակաց ոմանց տիրականք գաղափարեալ ըստ ժամանակի: Իսկ Արիստոտէլ՝ զիսկդ, այսպիսի եթէ տեսանելդ հաստատուն է քան զլուր, որպէս զարեգակն ոչ ոք²¹ լինի կարող ժխտել, իսկ զաներեելի ինչ՝ բազումք, վասն որոյ և նախադասեցաւ տիրականս Մարկոս քան զառասականն մարդ:

Տարբերցվածներ. — 1 Յ անուն. 2 Յ զարժագանութեանցն. 3 Յ թէ. 4 Յ չիք. 5 Յ նոյն. 6 Ա Խոյարաւըն. 7 Ա տեղւող. 8 Ա չիք. 9 Ա զաւրուց. 10 Ա և անգուստ... ի կարգին՝ չիք. 11 Ա անշարադիրն. 12 Ա սեռականիդ. 13 Ա տրականիդ. 14 Ա յայտի. 15 Յ զորոց. 16 ԱՅ հարցականդ. 17 Յ կոչականդ. 18 Յ տեսակս. 19 Յ չիք. 20 Ա նշանակեալ. 21 Յ չիք:

[3] Եւ յերկոցունց¹ ի վերոյ տուեալ² լինի եռակի գոլ կամ պարսաւ, որ է սգւոյն մեծ, քան զմարմնոյն, և մարմնոյն՝ քան զարտաքնոցն երկաքանչիւր գովութիւն և հակառակն:

[4] Առինշունակ՝ սառյգ, որ միմեանց հակադարձին և զմիմեանս բառնան, որպէս տէր զծառայ և նայր տո որդի:

[5] Իսկ իրը³ ստինշունակն նման սմա, այլ ոչ նոյն, վասնդի բառնալն զմիմեանս զիշերոյ և տուբնշեան ոչ ես:

[6] Եւ հոմանուն լինի ըստ պատահման և մտածութեան, պատահմամբ՝ յորժամ երկուց ոմանց նոյն զիշեցի⁴ անուն տիրականդ [և տուասական՝ արծուի՝ թոշուն և արծուի⁵] շինածոյ ի փայտից, իսկ մտածութեամբ՝ ըստ պատուայ, յաւոյ, աղաւթից և այլոցն ես:

[7] Քանդի փաղանունն ըստ քերթողաց լի բազմանուն, իրը թէ սուրն բազում ունի անուանս զիւրեաւ բարդեալ. իսկ ըստ իմաստասիրոց է փաղանուն, զի կենդանին բազում բնութեան⁶ անուանս փաղեաց:

[8] Տերանուն կոչի յիրացն բերմանէ՝ ի զարից՝ զարբայր⁷ և ի վանման՝ վանեալ:

[9] Երկանուն է, որպէս ումեմն կոչեցաւ Պետրոս և Կելիաս. արդ եթէ ումեք կոչեցաւ Կելիաս միայն, ոչ անդրադարձի ի նմին հաւասարապէս և Պետրոս, որպէս հրոյ ջերմ գոլ և ջրոյ խոնաւ է հարկաւոր⁸:

[10] Բայց մականուն է հանգերձ այլով անուամբ կամ յասաքինութենէ և յընդդիմակէն առի, իրրե Յովհաննու՝ Որդի որոտման, զի զաւրէն որոտման հնչեաց զրանն ընդ տիեզերս զաւետարանական վարդապետութիւնն⁹:

[11] Ազգական է, որպէս միոյ ազգի մարդ ինքեամբ յատուկ կարող է զրաւանդակն յայտնել զադ:

[12] Հարցականն ըստ երից դիմաց. մի՝ իրը թէ զրոլորակն¹⁰ սոսաջի գնելով հարցանէ զիրն, ապա զորպիսութենէն և զարձեալ զորչափութենէ. սոյնսպէս և զդիմացն բնութիւնն քննել և որպիսի և որչափ:

[13] Իսկ եթէ անպատեհ իցէ ասելն, զանցանէ, ընգենլով ի յաստ զլսնդիրն, յայնժամ անորիշ եցոյց իրրե զանյայտ ի բազմաց:

[14] Այլ դարձեալ ի վեր թերելովն և նմանեցուցանելովն և հատուցանելով զինդրելին բանիւ, այսպէս յայտնի, իրը թէ՝ այսպիսի, այսշափ, այսրան:

[15] Բակաձական¹¹ լինի բակառական, որպէս ոլարասելով եղական թուովն զրազմաւք բակառակաց¹²:

[16] Իսկ մակրաշխ է, եթէ յիշխանէ բան¹³ և կամ այլ ինչ պարզենցի¹⁴ երկաքանչիւրոց և կամ իւրաքանչիւրոց, որում տացին, ի վերայ նորա երթայ և վերբերութիւնն:

[17] Պարունակն ոլարփակեալ յինքեան տեղեաւն՝ կուսասանն զկոյսն և ընկուզուան զընկուզին:

[18] Քերդեալ է որակարար¹⁵ բարանութիւն, որ է որակարարութիւն, որպէս ի քաղցրութեէ քաղցրութիւն նև ի դատնութենէ դատնութիւն. նոյն-

Տարբնեցվածներ. — ¹ Ա յերկուցն. ² Յ վերառեալ. ³ Ա իրրե. ⁴ Յ զիշեցի. ⁵ Յ բնութիւն. ⁶ Ա զադթեայս. ⁷ Ա հարկաւորապէս. ⁸ Յ բարոզութիւնն. ⁹ Յ բոլորական. ¹⁰ Ա բակաձական. ¹¹ Ա զրազմաւ բակառեալ. ¹² Ա չիք. ¹³ արդեխցի. ¹⁴ որակարար:

ողէս և Հոմերոս յիրաց պատերազմին, իբրև տես զնոսութառապեալու, առաց՝ պատազմն և զվրդովն և զյոյզն»:

[19] Սեռական է, թէպէտ բազում ուրեք ասացաւ, հաւասառեաւ աստանաւը ունի, զի կենդանին բազում տեսակս կենդանեաց ունի ընդ ինքեամբ, նոյնագէս տունին՝ զծառու:

[20] Իսկ յատկական ի կենդանոյն եղն, ի տնկոյն՝ եղենի¹, այսպէս անհատ հոլով յիւրաքանչիւր ընութեան² և ի միմեանս անխառն և լինի անհատ մին ըստ կարծրութեան, որպէս աղամանդ, միւս³ ըստ մանրութեան, որպէս հիւղէ⁴ ի շողն, երրորդ ըստ անխառնութեան՝ ձիոյն յարջառոյն տեսակ:

[21] Զանազան⁵ իմն⁶ դաս⁷ և թիւ, քանզի դաս ասի, յորում կարգաւորութիւն ընտրի ըստ աշաբիճանի:

[22] Եւ թիւ՝ թէպէտ ի ստորաւստ ի վեր և կամ վերուստ ի խոնարհ սկսցի, անհակառակ է:

[23] Բացարձակ ասելով զասառած, քան, զյառաջագոյն սխալեալ⁸ իւր բժշկեաց, և է բացարձակ մի ըստ այնմ, զի ոչ տեսանի գոյութեամբ և ոչ⁹ ի քննելն ըմբռնի արարչական զաւրութիւնն, քայց ի հեռուստ հաւատով իմանի առ խրաքանչիւր ումեք. և միւսն՝ բացարձակ ձայնիւ լսի և համառաւտ ի բաց տուեալ, որպէս զոլուստ հոգոյն դուր, զինդութիւն, զիսաղաղութիւն և որ ի կարգին է:

Եւ զի յերկարեաց զմասունս ձառիս, յիշատակէ վերստին զանուն, զի ծանոյց, եթէ սորայ են ասացուածք ամենայն:

Եւ հաստագրութիւն ասի յիրաւի ներգործութիւն և կիր, զի երկումք¹⁰ է հարկաւոր վարել անուան¹¹:

[ԺՂ. ՅԱՂԱԳՍ ԲԱՑԻ]

Բայց թէ որպէս նախադասեցաւ անուն քան զրայ, յայտ է ցուցանելովն. իսկ բայի¹² արժանաւոր իսկ էր երկրորդիս հասանել դասու և սկսմամբ¹³:

Իսկ սահմանեալ զատուցաւ յայլոցն քայ զաւրէն ունի անհոլովի որոշի յանուանէ. և զի կայր խառն ևս ընդ այլոն և ած յոլովս ի վերայ որպէս ի վերայ Սոկրատացն, զի ի բոլորից զատուցէ:

Եւ զի՞ յարեանայ՝ զհետ երթայ բայի:

Բայց զի՞ նախ զիսնարհութիւնու¹⁴ ասաց քան զամանակ. զի խոնարհութիւնքդ են¹⁵ բերող ամանակաց և յայտ ի խոնարհմանցն է:

Տրամադրութիւնդ են տրամախութիւնք¹⁶ և է ոչ ի վերայ հաստատութեանն, և է բուն և ստոյգ ներգործութիւնն գանեմն և կիրք՝ գանիմն և միջին՝ մոռացայ որ և կամ մոռացեալ եղի¹⁷. Բայց յայլ վայրս¹⁸, որպէս կործայք¹⁹ վարին կրականին ոչ²⁰ հմտարար, այլ ըստ սովորութեան:

Անուանց նախադասիարից՝ անուան զրունն և զամանցեալն նշանակէր. իսկ սա ի մի²¹ սոսկ կայ ի վերայ ձայնի միոյի վանդիւ ածանցեալ:

Տարբերեցվածներ. — ¹ Ե իւղենի. ² Ա ընութիւն. ³ Ա մժն. ⁴ Ա հիշէ. ⁵ Ե զանազանին. ⁶ Ա դաս. ⁷ Ա սղալեն. ⁸ Ա շիք. ⁹ Ա երկոյքումք. ¹⁰ Ա անուամբ. ¹¹ Ե բայդ. ¹² Ա սկման. ¹³ Ե խոնարհութիւն. ¹⁴ Ա շիք. ¹⁵ Ե տրամափախութիւնք. ¹⁶ Ե եղէայ. ¹⁷ Ե վերա. ¹⁸ Ե կործայքդ. ¹⁹ Ա ոճ. ²⁰ Ա իմ.

Չիք՝ նոյնք բատ անուան ձեռյ:

Թիւք՝ եզական միոյ նշանակիչ, երկուորական՝ մեր չիք, յորնական՝ յանքուու անկանի:

Թէմք ասին ոչ զիրաց, այլ զգիմաց իսկ, իրը թէ նախ՝ յառաջնմէն բանն, երկիր² առ մաւառուրն, երիք՝ առ ևս հեռաւորագոյնն:

Ամանակ հաւասառեաւ երեք՝ ներկայ, անցեալ, ապանի: Ասացին ոմանք զներկայ իրիցագոյն վասն անցելոյն ընդ նա երկուցն ևս, և այլք՝ զանցեալն յաղագո յառաջագոյն անցանելոյն ըստ նախագասութեան: Դաբձեալ հարցաւ յոմանց՝ զինչ է ժամանակ՝ ի գոյից, թէ³ ոչ դոյից. «Եք ի գոյիցն ասացին զայս աւրինակ, թէ լուսաւորաց շարժմունք և ընաւ լինելութեանցան⁴ աճմունք և յարմարութիւնք աշխարհի ի ժամանակի կատարին. իսկ Արիստոտելէս ասաց ի յոչ գոյից, որպէս ի յուշկապարկացն համբաւ անուամբ միայն և ոչ ճշմարտութեամբ. զանցեալն այսպէս աղարտէ, զի իրը անց, ապականեցաւ. զապառնին՝ զի չէ իսկ ի միջի. զներկայն՝ աներեւութարար իմն, զոր աւրինակ թէ ի քուն ոք իցէ և կամ յայլ սրաւսանս ինչ, նա զիւրն կատարէ զբնթացսն ըստ աւրինակի ջրոյ իջանելոյ ի խողովակէ յաւազան⁵ ինչ⁶ տեղիս. իջանէ յաւազան⁷ և ոչ երենցաւ, և ընդ իջանելն ծորի:

[ՃԵ. ՅԱՂԱԳՍ ԼՇՈՐԴՈՒԹԵԱՆ]

Առ որով ասելի է⁸ զլծորդութիւնս, զի խառնուած է սորա՝ ձեռն տալով ստուգարանութեան: Եւ լծորդուրիւն ասի, յորժամ ելիալ մի ի լծոյն՝ մտանէ ընկերակիցն՝ բառնալով՝ զլուծն, որպէս բենն զմենի և կամ մենն զպէի, նոյնպէս և այլքն:

Եւ կարգաւոր՝ զի ոչ այլ ընդ այլոյ, այլ յանցիւր կարգի մտանիցեն. յորոց լծորդաց ութքոց⁹ առնուն զոլորակն, յորժամ սոսկ ասիցի բերեմ, իսկ յաւելեալ զայս ինչ բերեմ՝ ոչ ևս:

Արդ ծախելով զրոլոր բաղաձայնան ի լծորդան, կամի արդ¹⁰ զձայնաւորսդ ի նմին զասու լծորդաց դասել. եշդ, ըստ որում նշանակէ զզովիմն և դիեմն, ասեմ լծորդ, իրը զի յատուկ է ոչ անուն¹¹:

[ՃԳ. ՅԱՂԱԳՍ ԸՆԿԱԽՆԵԼՈՒԹԵԱՆ]

Այլ վասն ընդունելութեան, զի հասարակ ասի գոյանալ ի բայէ և յանուանէ. եթէ կատարեալ ունէր զերկոսեան, ապա նախագահ զասէր քան զերկոսեան. իսկ զի միոջէ մտան ինչ ունի և մտան ինչ՝ ի միւսմէն, այսր աղարտաւ ոչ քան զնոսա նախկին, բայց ըստ նոցանէ¹² կարգեցաւ:

Իսկ եթէ զինչ է ընդունելութիւն, ինքն ըստ ինքեան անունդ յայտնէ. քառի ի դմա սես է. յարկանայ՝ իրը զհետ երթայ ընդունելութեան որ ինչ բային անկք, բայց զի զդէմս ոչ յայտնէ և ոչ զիսոնարհմունս, զի շինելն ոչ եցոյց զդէմս. իսկ այլք ի բային նոյնք և ի նմա: Եւ զհոլովս ըստ անուանն, որպէս արարելով, արարելոյ և որ ի կարգին:

Տարբերեցվածներ. — ¹ Յ անրաւա. ² Յ երիք. ³ Յ լինելութեանս. ⁴ Յ աւազին.

⁵ Յ յաւազն. ⁶ Ա չիք. ⁷ Ա բառնալ. ⁸ Յ ութիղ. ⁹ Ա արգեաւք. ¹⁰ Ա անուան-

¹¹ Յ սոցանայն:

[ԺԷ. ՅԱՂԱԳՍ ՅԱԼԻԴԻ]

Յաւդ ըստ մերումս փռքը¹ ինչ նշանակ է, իսկ յաւդիւդ նշանաւոր, բայց այլ ամենայն նշանք դորա ի հայումս ոչ ինչ յայտնեն, այլ միայն եղեալ է՝ վասն զտեղիդ լնլոյ:

[ԺՐ. ՅԱՂԱԳՍ ԴԵՐԱՆՈՒՆՈՒԹԵԱՆ]

Վասն գերանունութեանդ կարգի² դիտելի է, զի որպէս անուն նախ կարգեցաւ քան զրայ, նոյն աւրինակ սա քան զմակրայն:

Իսկ դերանուն է փոխանականութիւն³ և թերանուն և հասարակ անուն. միդ՝ փոխանակ տիրականին, իսկ միւսդ՝ թերի քան զիսկն, երկրորդ՝ հասարակարար. զորաւրինակ ազգի մարդկան բոլորեցունց ասի մարդ, նոյնպէս և դերանունդ ամենայնի երթայ, ասելով՝ ևս և դու և նա. բարդ՝ զաւրէն սեսի:

Իսկ յայտնել զորոշումն դիմաց, մի՝ զյանդիմանակացն իրեկ է դա, երկրորդ՝ զնեսացեալն, եթէ պէտք ինչ նովաւ վճարեսցի, ասի՝ «Եթէ նա աստ էր, կարող էր վճարել». նոյն ասել ի մէջ բերեր և սրոշեցեր զիսկն-գրեալ դէման:

Արդ զի⁴ զանուան նմանութիւն յինքեան բերէ. նախագաղափար ցուցանի իրը թէ զիմ, զքո, զնորա դէմա, իսկ ածանց՝ ի դիմաց տեղւոյ ստացուածն ոչ իրեկ զարարչէն, այլ ի ստացողէն:

Սերք՝ արական, իզական, չեզոք՝ ձայնիւ նշանին ասացեալ. թէ յանուան⁵ զի կատարեալ էր, փոքր ինչ ունէր, իսկ ի սմա՝ և ոչ բնաւ, զի մասն է, բայց յատուկ ըստ յիւրաքանչիւր դիմաց:

Թիւ՝ ըստ անուանն ի վերայ չափեցելոյն⁶ երեալ:

Հոլովք՝ առաւել ևս քան ի յանուանն աստ կարգեալ, վասնզի անդ է ինչ որ այլ զայլոյ ունի, իսկ աստ ստորդ:

Իսկ զնևս յայտնի⁷ է նախ անձն⁸ իմ, անձն քո, անձն նորա և ասլա ի կարգին զնոլովսն⁹:

Եւ զնախագաղափարդ՝ զի երկրորդէ և երրորդէ¹⁰ հարկաւորարար, կամեցեալ ցուցանել դովաւ զերկղիմի բնութիւն ածանցիդ. աւրինակ իմն, թէ ասիցի՝ իմոյ այգույ բերը և թէ այլ ինչ, միով ձայնիւ զինքն և զստացուածն դեկուցանէ:

Իսկ բաղաւդդ¹¹ իմանի¹² սղալանք արուեստաւորիս, զի յաւդի մասն էր և ոչ դորա. և է անբաղաւդդ պարզ բառ, իսկ բաղաւդդ՝ յաւելուած ունելով ի պարզն:

[ԺՐ. ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԳՐՈՒԹԵԱՆ]

Յետ որոյ նախազրութեանդ¹³ անուն և տեղի աննմանք, վասնզի անունդ նշանակէ առաջնոյ և տեղիդ՝ վերջին: Եւ թէ սխալ էր, ոչ վարեցեալ լինէր մինչև ցարդ: Իսկ նախադիր¹⁴ ասի, զի յառաջ եղեալ լինի քան զանուն և զրայ ի բոլոր տեղիս իրը սպասաւոր, իսկ զի ոչ է քան զնոսապատուական, աւրինակ իմն կարապետ քան զթագաւոր:

Տարբերգվածներ — 1 Յ փռքունք. 2 Յ կարգիդ. 3 Յ փոխանակ անունութեան. 4 Ա անուան. 5 Յ չափեցելոց. 6 Ա ամոլի. 7 Ա անձնդ. 8 Ա չիք. 9 Յ չիք. 10 Ա բաղաւած. 11 Ա իման. 12 Ա նախազրութիւն անդ ուր. 13 Յ նախադիր:

Բառդ՝ զաւրէն սեռի. բարդութիւն՝ ի սակաւարանութեան վերայ¹, իրը թէ վաղտուր, իսկ յորժամ խնդիրն յաւելու, յայս բաղդասեցեր:

Եւ է Հոռոմին ութեատան, իսկ մերս՝ անհամար և անբաւ:

Իսկ ստորագար՝ մի՛ և՛ նախկին, և՛ վերջին՝ քո սակս, սակս քո, իսկ երկու ստորագասքն՝ դրակից² և կամ հաղորդ³:

Բայց զի՞ սա նախդասեցաւ քան զմակրայն. զի մասն է անուան⁴, իսկ մակրայն՝ բայի. զոր աւրինակ ապատահմ հարուստ. և ազատն թէլ աղքատ, վեհագոյն և նախագահ քան զծառայն:

[Ի. ՅԱՂԱԳՅԱ ՄԱԿԱՐԱՅԻ]

Իսկ անխօղաց, զի ոչ ունի խոնարհումն իրրե զրայ, իսկ ստորաբայ է և կամ ի վերայ, որպէս⁵ զայս շինեմ և շինեմ զայս:

Պարզ, ի նմին դրոյդ յայտ է և ջոկադիր. մին՝ վաղ, նախ⁶ և միւսն՝ վաղվաղ, նախավաղ:

[1] Եւ ամանակի յայտնիչ է՝ այժմ՝ ներկայի⁷, յայնժամ՝ դանցելոյն, դարձեալ՝ զապանոյն. և զդոսա իրրե զուռոս, իսկ զերկին և զվաղիւն՝ իրրե զտեսակոս:

[2] Զբարիորն և զյատկապէսն ասել արականին և իդականին հանգետ, զի միջին են:

[3] Եւ մուրցացի և ծղացի և արացի են յայտ, իսկ ողկուզաւրէն և տարմարար քերդեալ ի Հոմերոսէ, իրը թէ խիտ և տարմարար զաւր հանգիստնայր ի պատերազմի ուրեմն:

[6] Կալք Երեք՝ ի տաճ, ի տաճէ դուրս և անդուստ⁸ ի ներքս:

[31] Ապերդմնափան՝ յասելն ուրուք քառ, թէ չիք արարեալ:

Դրութիւն ծայրիցն և սեռին չարի միայն երկրայելոյն⁹ և միջակի և մոլութեան բազում այլանդակ բանիցն մի ինչ յանկարծակի և զլինելոյն ճառեսցէ իրս:

[Իա. ՅԱՂԱԳՅԱ ՇԱՂԿԱՊԻ]

Շաղկապդ զի՞ ի վերջէ ասացաւ. գիտելի է, զի ոչ ամենայն վերջին լու և ոչ բնաւ անարդ, վասնզի թէպէտ կառավարն ի վերջէ մտեալ ըստ հարկաւոր պահանջման տեղւոյն, այն առաւել պատուական. իսկ սա ոչ ըստ պատուոյ, քան եթէ պիտոյից. աւրինակ իմն՝ յորժամ նիւթ ինչ ի միջի կայ, այնժամ պիտի և¹⁰ կատ, և սու նոյնալէս բայի¹¹ և անուան և այլոց կատ և յարմարութիւն լեալ¹²:

Իսկ շաղկապ ասի ի շաղելոյ իմն և կապելոյ զբառ ընդ քառ և զմիտու ընդ միտոս, որպէս զի զմեկնութիւն բանին յայտնեսցէ: Եւ մեկնուրիւն՝

Տարբերեցվածներ. — ¹ Եշիք. ² Ա դրակիցք. ³ Ա համահազորդ (փխն. կամ հազորդ).

⁴ Ա բանի. ⁵ Ա չիք. ⁶ Ա վախճան. ⁷ Ա ներկայի. ⁸ Ա անտուսափի. ⁹ Ա երկրայելոյն.

¹⁰ Ա չիք. ¹¹ Ա բարի. ¹² Ա սրանից հետո տեքստն ընդմիջված է հետեւյալ հատվածով:

որը յուսանցքում նշված է «յայլմէ» բառով. «Քիլ՝ վեցերորդ մասն է կա[ն]զնի, զի կանգուն վեցքլեան է: Միտք է յարմարացոյց զանազանելոց իմանալեաց. և յառաջրեական բանն նոյնալէս և միաւորեցուցիչ զանազանողաց իմանալեաց տաղից ի փաղառութիւնս և փաղառութեանց ի բառս և ի բառից բաղմաց ի շարադրութեան և երկայն ասացուածս. և անհուն հեղեալ ունի միտք երկայնութիւն եքտի (?) և երկայնի առ ամենայն իմանալիսն, և բայ երկանանա (sic) և լայնանա ըստ արտադնացական ճառից»:

ոչ կարեւը ինչ քննող լուծմանց, այլ սովորական խաւսից բառ¹, Բառ՝ դաւրէն ունի²:

[1] Արդ հանդամանք շաղկապիս իջնկամանին³ անհուն՝ երկուք աւրինակաւք, զի ի սկզբանէ աշխարհիս լեալ որս մինչև ցայցմ ի մէջ առնուցուս պատմելով և կամ ի քէն մտածութիւն խորին: Եւ է ջոկաման իրը և զմիաբանութիւն իմն գիմաց և առաջարկեալ գիմացն առ իրեարս ըստ ցուցելում աւրինակիդ և ասի եւ, զի⁴, իրը թէ՝ «ես և զու»:

[2] Իսկ անջատականն ընդդէմ սմին զմիտս իրին⁵ ոչ բաժանելով, այլ զդէմսն միայն որոշելով, եթէ՝ «կամ առնեմ, կամ⁶ արա»⁷:

[3] Բաղմատդէ, որ ոչ ի նմին հաւասոտի ճանապարհի⁸, այլ ճանապարհուն՝ ըստ առակի սերմանն, որ վերաբերի ի հերձածողսն. և գիտելիի է զնա, թէ՝ «յորժամ ծածկի յամալ յարեգակն», զգոյութիւնն ոչ նշանակէ, բայց զիարդն:

[4] Իսկ ապրանձան, որ զո՞ն և զգոյացութիւնն յայտ առնէ՝ «Վասնդի՛ ուրախարարն պարտ է ուրախ առնել»:

[5] Փատրանական է իրը զմանապարհորդին յամեցելոյ զպատճառն ընդիցէնք՝ «է՛ր աղապաւ յամեցերք»⁸:

[6] Որոյ⁹ ընդդէմ տարակուսականն, զի անդ ի հարցմանէն պատճառն յայտնեցաւ, իսկ աստ յանյայտէն՝ միայն տարակոյսն¹⁰:

[7] Բաղբանական¹¹ է բազում բազեալ բանս և ի վեր եկեալ առակաւք և հաստատութեամբ, զոր զիւրագոյն և զարմանալով ասել՝ «ուրեմն այս էին երազքն Յովոեփու»¹²: Բայց և հնարաւոր է¹³ միում անուան երկու կոչմունս ընդունել, որպէս և մարդ առհասարակ¹⁴ ասի. զարձեալ տիրական կարէ ասել մարդ¹⁵, սոյնպէս¹⁶ ուրեմնի է՝ քաջալերելի և տարակուսելի:

[8] Թարմատար ոչ իրը և հարկաւոր որպէս¹⁷ զայլսդ, այլ աւրինակի իմն զոյզն նկար ի հանդերձի վասն փոքր ինչ զարդու, նմանապէս և սամամբ զչափ տաղին լնով և կոմ զմիտս ինչ պայծառացուցանելով:

[9] Բայց ընդդիմանակող զոմանս տուէ¹⁸ սովորութիւն է խմատնոց զհաստատունոն ինքեանց անուամբ ասել, իսկ զերկրայելիսն, ուստի¹⁹ եպերանք ինչ զայցեն այլոց բանիւ և ընդդիմական՝ «թէպէտ արադ էր, սակայն հասի, թէպէտ²⁰ զաւրաւոր, յաղթեցի»:

[10] Վարանական է, զի յորժամ յառաջնոյն ոք վրիպէ, առ հարկի ընդունի զերկրարդն, որպիսի թէ՝ «Յայնչափ յաշխոյժ վաստակոց ոչ բաւականամ և այլոց գոնեայ և ոչ ձի ի զարմանել և զատարկարար կերակրիլն լեալ»:

[Իբ. ՅԱՌԱԴՍ ԱՌՈՂԱՆՈՒԹԵԱՆ]

Առողանութիւն առասացութիւն²¹ ասի. և սեռականք չորք վասն այսորիկ ասի, զի յառաջիկայս բաժանին ուրբակն ի շեշտ և ի բութ և

Տարբերեցվածներ. — ¹ Ե չիք. ² Ա սեռից. ³ Ե ի ջոկամանակիս. ⁴ Ա երգի.

⁵ Ե ար. ⁶ Ա բաղաւոց. ⁷ Ա ճանապարհորդի. ⁸ Ե յամեցար. ⁹ Ա որ. ¹⁰ Ե տարակոյսն է յինքեան. ¹¹ Ե բազրանակ. ¹² Ա այս են պատերազմքն Յովոեփու. ¹³ Ե հնարաւոր. ¹⁴ Ա առհասարակական. ¹⁵ Ե սեռական կարէ ասել մարդոյ. ¹⁶ Ա որպէս. ¹⁷ Ա հարկաւորապես. ¹⁸ Ե ընդդիմանակիս զայլս ասէ դնողս. ¹⁹ Ա և ուստի. ²⁰ Ե թէպէտ և.

²¹ Ա առողասացութիւն:

[ի] պարոյլ, ամանակն՝ յերկար և ի սուզ, հագագն՝ ի թաւ և ի սոսկ, և կիրք՝ յենթամնայն, յաղաթարց և ի ստորատ: Ենթամնայն¹ է որպէս² աւրէնուսյց, ապաթարցն³ զի ի բաց բարձցի այրն, դնելով զնա, ասի ապաթարց:

[իգ. ՅԱՂԱԳՍ ՈՏԻՑ]

Ուր ասին, վասնզի որպէս բնութիւն կենդանեաց ի վերայ ստից հաստատագոյն⁴, այսպէս⁵ և քերզութիւն ամրող և հաստատուն կատարի այսոքիւք ոտիւք, որ չափը անուանին⁶ և են միմեանց դիմաղրութեամբ: և պարզը, զի աճմամբ լինին շարադրեալք:

Տարբերեցվածներ — ¹ Ա ենթամնականն է. ² Ա չիք. ³ Ա ապաթարցն. ⁴ Յ հաստատագոյն. ⁵ Ա սապէս. ⁶ Ա որ չափը անուանին՝ չիք: